ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1568 - Ն

ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԿԱՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՆՐԱՆՑ ՈՐԴԵԳՐԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԱԾ ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 113.1-ին հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել որդեգրման ենթակա երեխաների տվյալներն օտարերկրյա կենտրոնական մարմիններին կամ հավատարմագրված կազմակերպություններին տրամադրելու, նրանց որդեգրելու ցանկություն հայտնած որդեգրել ցանկացող անձանց հետ աշխատանքներն իրականացնելու, տվյալները հետ կանչելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2028 թվականի հունվարի 1-ից Արարատի մարզում, իսկ 2029 թվականի հունվարի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

3. Որդեգրման ենթակա այն երեխաների մասին ապանձնավորված տվյալները, որոնք որպես օտարերկրյա որդեգրմանը հասանելի հաշվառվել են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը, սույն որոշման հավելվածի համաձայն ներկայացվում են «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիային անդամակցող օտարերկրյա պետությունների կենտրոնական մարմնին կամ հավատարմագրված կազմակերպությանը սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, եթե սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ կենտրոնական մարմնում հաշվառված չեն Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող՝ որդեգրել ցանկացող անձինք կամ եթե հաշվառված անձանց հետ որդեգրման ենթակա երեխայի համադրման տեխնիկական փուլի արդյունքում երեխան չի առանձնացվել որպես որդեգրել ցանկացող որևէ անձի կողմից ցանկալի չափանիշներին համապատասխանող:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ